ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

N 1011

19 փետրվար 2025թ.

ՄԱՆՅԱ ԳՐԻԳՈՐԻ ԱԹՈՅԱՆ Ա/Ձ
(Հասցե՝ ք. Երևան, Այգեստան 9փ., տուն 25/1)

Հարգելի տիկին Աթոյան,

Մասիսի համայնքապետարանի և Մանյա Աթոյան Գրիգորի Ա/Ձ-ի միջև 16.12.2024թ. կնքվել է ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-3 ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագիր:

Միաժամանակ, Մանյա Աթոյան Գրիգորի Ա/Ձ-ն 19.02.2025թ. գրությամբ (մտից՝ 19.02.2025թ., N 1879) դիմել է Մասիսի համայնքապետարան՝ հրաժարվելով մատակարարել պայմանագրի 4-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը, ուստի պայմանագիրը 4-րդ չափաբաժնի մասով կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Միաժամանակ առաջարկում եմ սույն ծանուցումը ստանալու օրվանից հաշված 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Ձեր կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման ապահովումը՝ **756 450 (յոթ հարյուր հիսունվեց հազար չորս հարյուր հիսուն)** ՀՀ դրամի չափով և պայմանագրի ապահովումը՝ **504 300 (հինգ հարյուր չորս հազար երեք հարյուր)** ՀՀ դրամի չափով, վճարել Պատվիրատուի 900 435 002 101 հաշվի համարին, այլապես դրանց գանձումը կիրականացվի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սահմանված ժամկետում որակավորման և պայմանագրի ապահովումները Ձեր կողմից վճարված լինելու դեպքում Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վճարումները պետք է կատարել վերոնշյալ հաշվեհամարին, իսկ վճարումը հավաստող փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Արարատի մարզի Մասիսի համայնքապետարանի աշխատակազմի գնումների բաժին, 3-րդ հարկ, 316 սենյակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

Կապ. Գնումների բաժնի
պետ՝ Ք. Խաչատրյան